

- 96 Իսկ մինչեւ ցայն վայր ի հանդէսն յայնմիկ,
Ըզբաղեալ գործով ողբալի լըռիկ,
Ըզգերապայծառ Հայրն իմ երջանիկ,
Եւ զորբութենէս խորհեալ սակաւիկ:
- 97 Ձի ներկայութիւն նորին դիական
Թէպէտ հարուածէր զոգիս տըխրական,
Այլ զաչս բսփոփէր փոքր ինչ յայն ատեան,
Որովք պատրէի ես զօրէն մանկան:
- 98 Բայց նոյն ակունք իմ յորժամ կորուսին
Ջառարկայն որով անդորրեալ կային
Իսկոյն արտասուօք ոտինս ձայն տային
Ըզկորրւտենէ գըլխոյս գըլխովին:
- 99 Աստ էր տեսանել ըզփրդձուկ սրտիս՝
Որ յորդեալ հապճեպ ցաւ եւ կըսկիծ յիս,
Հարեալ խոցոտեալ գալարեալ վաղիս,
Ձիարդ յարտասուաց վըտակ սուզէր զիս:
- 100 Թէպէտ նոյն տագնապ լ' անձկութիւն ոգւոյս
Տայր զիս երեւիլ զերթ արկար լ' անյոյս,
Այլ գիտօղք վըշտաց իմ տառապելոյս
Ոչ մեղագրէին զիս որպէս անուս:
- 101 Ձի տեսանէին զիմ ցաւոց պատճառ
Ոչ գու մի միայն այլ բազմահամար,
Այն է կորուստ հօրս բաբունւոյս պայծառ,
Որբութիւն անձինս յայս երկիր օտար:
- 102 Գարձեալ կալս որպէս անգըլուի անդամ
Չերթ անդեկ նաւակ անտերունջ, տարտամ,
Անյեցուկ, անկախ, համբակ յարածամ,
Առանց խրրատչի եւ անբարեկամ: